ՍՈՒՍԱՆ ՌԱՄԱԶԱՆՓՈՒՐ

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հոդվածում ներկայացված է տեղայնացման ու ստանդարտավորման այն չափացույցը, որը Հիլզ Վեսինգը կազմել է ձեռներեցության հնարավորության ուսումնասիրության վերաբերյալ, ինչպես նաև ձեռներեցության հնարավորությունների զանազանման տարբեր կողմերը չափելու համար տեղական չափացույց: Հետազոտությունը իրականացվել է Իրանի փոքր արդյունաբերության տնօրենների (ձեռնարկատերերի) հետ՝ 100 հոգի, ովքեր ընդգրկվել էին պատահական նմուշների ընտրության եղանակով:

Ստանդարտավորված չափացույցի դաշտային հետազոտության արդյունքը ցույց տվեց, որ այս չափացույցն ունի ստույգություն և հետազոտողների կողմից կարող է օգտագործվել հնարավորության ուսումնասիրությունները չափելու համար:

Գործազրկության աճը, համաշխարհայնացումը պատճառ են, որ ողջ աշխարհով մեկ միլիոնավոր մարդիկ նոր աշխատանքների և ձեռք բերումների համար շարժվեն ձեռներեցության և հնարավորությունների ուսումնասիրության ուղղությամբ: Ձեռներեցությունը երկրների տնտեսության շարժիչն է և ձեռնարկատերն այս գործընթացի սկզբի և հարատևման հիմնական գործոն անձն է: Ձեռներեցությունը գործընթաց է, որի ընթացքում ինչ-որ անհատ, ով ինչ-որ հատուկ բնագավառում իր ունեցած նախնական գիտելիքների շնորհիվ որևէ հնարավորության է գտնում և նրա առևտրական արժեքի բնորոշումից և գնահատումից հետո, անհրաժեշտ աղբյուրներ է ձեռք բերում այդ հնարավորությունից շահույթ ստանալու համար: Ձեռներեցության այսպիսի սահմանմամբ կարելի է հասկանալ, որ ձեռներեցության գործընթացում ամենակարևոր բաժիններից է «հնարավորությունը» և իրականում աշխատանքի ստեղծման գործընթացի սկիզբը տեղի է ունենում հնարավորության ուսումնասիրության միջոցով:(2) Ավելի ստույգ բնորոշմամբ ձեռներեցությունը կարելի է բնութագրել որպես արտադրության հոգևոր և նյութական աղբյուրների և շուկայի պահանջների կառավարման հնարավորությունների օգտագործման գործընթաց, որտեղ ամեն ինչից առաջ պահանջվում է զանազանում, իսկ այնուհետև այդ հնարավորությունների վրա իրականացվող գործողություն: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր անհատի գործողությունը՝ հնարավորությունը բաժանելու մեջ, կախված է սպառնալիքից մինչև ներքոհիշյալ գործոնները:

ա) անհատների մտքում տեղեկության մշակման կարգը,

բ) շրջապատից անհատ տեղեկության փոխանցման համակարգը,
գ) շրջապատի կացության էական առանձնահատկությունները:

Հնարավորության զանազանումը ձեռներեցների ամենակարևոր կարողություններից մեկն է: (3) Աշխատանքի ստեղծման հետազոտությունների հիմնական նպատակը հիմնված է հնարավորության վրա, որը նաև այս հարցի պատասխանն է,թե
ա) ինչպիսի տարածքային և ժամանակային պայմանների ներքո և որ անհատներն են օգտվում հնարավորությունից,
բ) ինչպիսի գործոնների խմբի ազդեցության միջոցով են անհատները կարող զանազանել հնարավորությունները:(4)

Ձեռնարկատերերի առանձնահատկություններից մեկը ձեռներեցային հնարավորությունների զանազանման կարողությունն է: Որպիսի կարողանանք այդ հնարավորությունը կշռենք պետք է ունենանք մի վարկունակ չափացույց, որը կարող լինի կշռելու այդ առանձնահատկության տարբեր կողմերը: Աշխատանքի ստեղծման խնդրի վերաբերյալ տարբեր երկրներում գոյություն ունեն սահմանափակ թվով գործիքներ, որոնք հատկապես ձևավորված են ձեռներեցության հնարավորությունները չափելու բնագավառում, իսկ որպես ստանդարտ չափացույց, որ կարող լինի չափելու այդ առանձնահատկության տարբեր կողմերը ամբողջությամբ, գոյություն չունի, ուստի Իրանում ևս աշխատանքի ստեղծման խնդրում այդպիսի ստանդարտ չափացույցի բացակայություն է նկատվում:

Հնարավորությունն այնպիսի երևույթ է, որը կապված է միջավայրի պայմանների հետ: Անհատները հնարավորությունը և սպառնալիքը մշտապես իրենց հետ ունեն: Որպեսզի որոշակի կացություն, որպես հնարավորություն կամ սպառնալիք զանազանեն, կապված է բանականության երկու ձևերից ամեն մեկի ակտիվացման արագության հետ:Միևնույն ժամանակ բանականության երկու ձևերից ամեն մեկի ակտիվացման արագությունը կապված է այնպիսի նշանների և տեղեկությունների հետ, որոնք ձեռք են բերվում շրջապատից:(5) Հնարավորությունը կապված է այնպիսի իրավիճակի հետ որում անհատը հավատում է, որ նոր աղբյուրների կազմությամբ կարող է օգուտ ձեռք բերել:(6)

Հնարավորությունը, որպես ճեղքվածք պոտենցիալ ապագայի և ընթացիկ իրավիճակի միջև ընկալելով, դրա վրա կամուրջ կապելը իրականացվում է ձեռնարկատերերի կողմից:(7) Մի քանի հետազոտողներ որոշեցին, որ հնարավորության զանազանման գործընթացը բնութագրեն նրա առանձնահատկություններով(Ֆիթ 2002,Շին 2003) և հնարավորության զանազանման որոշ բանաձևեր պատկերվեցին որպես փուլային մի գործընթաց այնպիսի տեսքով, որ այդ գործընթացի արդյունքը սահմանվեց

որպես «զանազանում»: Հնարավորության ուսումնասիրության ոլորտում հետազոտողները ջանքեր են գործադրում բնութագրելու բազմաթիվ գործոնների հատման կետը, որպես ձեռներեցության նախապայմանի, ընդհանուր միջավայրի (Գազլո և Թավեբ 1992 , Լենգ և Մաք Մուլան 1984): Նման տեսակետների զուգակցման մեջ Հիլզն իր գործակիցներով և Լումպկինն իր գործակիցների հետ միասին առաջարկել են մի այնպիսի բանաձև, որի հիմքում ընկած է «ստեղծարար փուլ» կոչվող շրջանակը և որը ներկայացնում է հնարավորության զանազանման բանաձևի ստեղծման համար անհրաժեշտ տարրերը:(9)

Այդ փուլերը բաղկացած են 1) նախապատրաստումից, 2) մշակումից, 3) տեսակետից, որոնք ձևավորում են հայտնաբերողական ֆազը, 4) գնահատումից, 5) մանրամասների ուսումնասիրությունից:

Ձեռներեցության հնարավորության ուսումնասիրության չափացույցի ծավալները:

1- ձեռներեցության բազմաթիվ գաղափարների առկայությունը

2- ձեռներեցային ըմբռնողությունը

3- ստեղծարարությունը

4- շուկայագիտության վերաբերյալ գիտելիքները կամ տնտեսագիտական հոտառությունը

5- ձեռներեցային հնարավորության գնահատականը

Ձեռներեցությունը ձեռնարկատերի իմացություն է համարվում, երբ ձեռնարկատերը այդ գործում էականորեն ուշադրություն է դարձնում ինֆորմացիային,իսկ խնդիրները, իրադարձությունները ու շրջապատում առկա գործելակերպային ձևերը հավաքում է ըստ պահանջների և ցանկությունների: (10)Քրիզները առաջին անգամ այս տերմինը ձեռներեցության գրականության մեջ սահմանել է որպես անհատների բնական ձգտումներ և ցանկություններ, որոնք բացահայտում են նրանց հնարավորությունները (Քրիզներ1985): Ըմբռնողության բաղադրիչը ձեռներեցության մեջ բանականության մի վիճակ է, որը մշտապես հաստատուն և որոնող միջավայրերում գտնվում է նոր հնարավորություն փնտրելու մեջ:

Ըմբռնողության բաղադրիչն իրականում շեշտը դնում է այն երևույթի վրա, որ որոշ անհատներ ունեն հնարավորությունների ուսումնասիրության անհատական պատրաստվածություն: Հիլզը, Լամպկինը և Սայեն (Չիկագոյի Իլինոիզ համալսարանից) օգտագործել են միջավայրի փոփոխությունների նկատմամբ զգայունության, հնարավորությունները ուսումնասիրելու պոտենցիալ կարողության, հնարավորությունները բացահայտելու բնազավառում որոնման ցանկության, գաղափարների հանկարծակի ծագման վերաբերյալ հավատի, աշխատանքի հետ ունեցած գաղափարի

կապի և հնարավորության ուսումնասիրության ցուցիչները:(11) Բարդություններն ու խնդիրները արագ ճանաչելու կարողությունը և լուծման եղանակներ ներկայացնելը, առանց աղբյուրներին նորից ձև տալը և ուղղելուն անդրադառնալը, կոչվում է ստեղծարարություն (Ռայ և Քարդուզ 1996): Հերբերթ Ֆուկսի խոսքերով ստեղծարարության շրջանը բաղկացած է բանականության ֆունկցիայի ցանկացած տեսակից, երբ ինչ-որ խնդիր կլուծի նոր և շահավետ եղանակով: Ինչպես նաև թեմաների շաղկապման և միակցման կարողությունը, առանց նկատի ունենալու, թե ինչ բնազավառում է իրականացվում, որը բանականության ստեղծարար շահույթ բերող հիմքերից է: Քայզերը նույնպես ստեղծարարությունը նոր գաղափարի կամ մտքի ստեղծման համար բանականության կարողությունների օգտագործում է համարում: Ընդհանուր առմամբ ստեղծարարության ծագումը ցանկացած գործունեության մեջ տեսանելի է և գործունեությունից ոչ մի հատուկ տեսակով չի սահմանափակվում: Ամեն դեպքում, այն որ նոր գաղափարի ծագման մեջ և ընդհանուր առմամբ ստեղծարարության շրջանում նշանակություն ունի, միտքն է: Հիլզը, Լեմպկինը և Սայեն Իլինոիզի համալսարանից ստեղծարարության սահմանման համար օգտագործել են հետևյալ ցուցիչները որպես արարող անհատի իր նկատմամբ ունեցած հավատը, հնարավորության ուսումնասիրության մեջ ստեղծարարության վրա եղած շեշտը, ստեղծարար մտքին հատկացված ժամի չափը և ստեղծարար գաղափարների ծագման կարողությունը:(12)

Նոր առնտրական հնարավորությունների զանազանումը պատահականորեն տեղի չի ունենում, դա տեղի է ունենում մշտական և նպատակասլաց ջանքերով գաղափարի հայտնաբերմամբ և տեղեկության ձեռք բերմամբ: Ինչպես նաև ինչ-որ գործի մեջ ներքաշվելը հաշվի առնելով հաճախորդների պահանջները և շուկայում նրանց հետ ունեցած հարաբերությունները:Բնականաբար բոլոր այս առիթների համար անհրաժեշտ նախապայման է համարվում անհատների և փորձառու խմբերի հետ ուղիղ կապ ունենալը, շուկայի և հաճախորդների խնդիրներին և դժվարություններին խառնվելը, որտեղ մարդիկ սովորում են և, անմիջապես, համեմատաբար ամբողջական տեղեկություն ստանալուց հետո իրենց աշխատանք ստեղծող ուղեղներում տեղի են ունենում գործընթացներ և կարողանում են զանազանել հնարավորությունները և անգամ միջավայրի սպառնալիքները վերածել օգտագործելի հնարավորությունների:(13)

Գրականության մեջ հնարավորության զանազանման համար գոյություն ունի երկու ամբողջական մոտեցում առաջին մոտեցումը հնարավորության զանազանումը համարում է հնարավորությունների սիստեմատիկ որոնման արդյունք և երկրորդ մոտեցումը հնարավորության զանազանման

գործում չի ընդունում սիստեմատիկ որոնումը: Ավստրիական դպրոցը հետնում է այսօրինակ տեսակետին: Քերզները (1973) հնարավորության զանազանումը որպես ձեռներեցային ըմբռնողության հետ կապված դեպք, հետևյալ կերպ է սահմանում «հնարավորությունների զննման կարողություն առանց այն հնարավորությունների որոնման, որոնք մինչև այժմ անտեսվել են»: Համաձայն այս տեսակետի հնարավորություններն առանց որոնման են ուսումնասիրվում, կապված այն հանգամանքի հետ, որ որոշ մարդիկ շուկայի պայմանների վերաբերյալ անհատական գիտելիքներ ունեն և տիրապետում են այնպիսի տեղեկության, որը հասու չէ ուրիշներին: Այս տեսակի կողմնակիցները համոզված են, որ հնարավորությունների համար հաշվարկված որոնումը նշվում է անուղղակի կերպով, քանի որ աշխատանք ստեղծողները նախորդք գիտեն թե ինչ են որոնում և հնարավոր չէ այն, որ հնարավորությունները նախօրոք կոահելի լինեն: Այս գաղափարին հակառակ, որոշ հետազոտողներ համոզված են որ հնարավորության զանազանման համար սիստեմատիկ որոնում է հարկավոր:

Մարդիկ տեղեկության սիստեմատիկ որոնումից և գործողության վերածման հնարավոր գաղափարի հայտնաբերումից հետո, պետք է հավատ և վստահություն ունենան իրենց գաղափարի նկատմամբ: Քանի որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատն ունի տնտեսագիտական հոտառություն և որ այդ կարողությունը ձեռք է բերել շուկայի անհրաժեշտ պոտենցիալները և հաճախորդների պահանջները պաշտոնապես և խորը ուսումնասիրելու արդյունքում, ունի կարողություն սպառնալիքները զանազանել հնարավորություններից:

Փոփոխականի անվանումը	Քննարկված ցուցիչներ
հնարավորության ուսումնասիրություն	1-գաղափարների քանակը 2-գաղափարների քանակը, որոնք հաջողություն են ունեցել 3-հնարավորության (գաղափարի) կապը ձեռնարկատիրոջ գործի հետ
ձեռներեցային ըմբռնողություն	1-Հնարավորությունների հանդեպ եղած հատուկ զգայունություն և ըմբռնողություն 2-բնական կերպով հնարավորությունների դիտարկում 3-անգամ նոր հնարավորությունների մասին մտածելուց հաճույք ստանալը
ձեռներեցային ստեղծարարություն	1-մարդու որպես ստեղծարարի իր հանդեպ ունեցած վստահությունը 2-հնարավորությունների ուսումնասիրության մեջ ստեղծարարության կարևորության շեշտումը 3- ստեղծարարի մտքին հատկացված

	ժամանակի չափը 4-ստեղծարար գաղափարների ծագման կարողությունը
Շուկայի վերաբերյալ գիտություն (տնտեսագիտական հոտառություն)	1-Հնարավորության զանազանումը հանկարծակի կերպով տեղի չի ունենում 2-շուկայում տեղեկության սիստեմատիկ որոնմամբ հնարավորության զանազանումը և աստիճանաբար յուրացումը. 3- հնարավորության զանազանման անհրաժեշտությունը շուկա մուտք գործելով «ընկղմվում» է գործի որևէ ճյուղում: 4-հնարավորության զանազանումը էլ ավելի լավ է տեղի ունենում, երբ այն շուկա է մտնում, ուղղակի կերպով շփվում և առնչվում է դժվարությունների հետ:
Հնարավորության գնահատում	1-գործի գաղափարի հանդեպ երած հավատ: 2-շուկայի նկատմամբ հոտառության առկայություն: 3- շուկայի հնարավորության նկատմամբ եղած ճիշտ դատողության կարևորություն :

Աղյուսակ: Հետազոտության փոփոխակաների բովանդակային սահմանումները.

Չափացույցի առանձնահատկությունները:

Ձեռներեցային հնարավորությունները և նրա տարբեր ծավալները չափելու համար կիրառվել է Հիլզի և Լամպկինի (1997) կողմից նախագծված չափացույցը որպես «ձեռներեցային հնարավորությունների զանազանման գործընթաց»: Հիլզի չափացույցը բաղկացած է 5 ստորադաս չափացույցներից, որտեղ յուրաքանչյուր ստորադաս չափացույց ունի մի քանի տարբեր հարցեր, որում անհատի հայացքները հատուկ հիմքերով է գնահատված:

շարք	Այն ինչ ենթարկվում է գնահատման	հարցի թիվը
1	Անհատների հայացքները հնարավորության իմացության վերաբերյալ կամ հնարավորությունների քանակը	1-4
2	ձեռներեցային ըմբռնողության նկատմամբ անհատների ունեցած հայացքները	21-19-8-7-5
3	ձեռներեցային ստեղծարար գաղափարների վերաբերյալ անհատների հայացքները	029-26-24-18-25-10-6
4	Շուկայի վերաբերյալ գիտության(հոտառության) նկատմամբ մարդկանց հայացքները:	9-11-13-14-15-17-20-22-
5	Հնարավորությունների գնահատման վերաբերյալ անհատների ունեցած հայացքները	16-23-28

Այս չափացույցի մեջ առաջին հինգ հարցերը չափում են անհատների գաղափարների քանակը: Այս հարցաթերթիկի չափացույցը Լինկերտի հինգ տարբերակի (միանշանակ համաձայն եմ, ինչ որ չափի համաձայն եմ, համաձայն եմ, ինչ որ չափի հակառակ եմ, միանշանակ հակառակ եմ) չափացույցին համապատասխան է պատրաստվել:

Աշխատանքի ստեղծման հնարավորությունների ուսումնասիրության գործընթացի և Իրանի տնտեսական, մշակութային, հասարակական վիճակի և միջավայրի պայմանների ուսումնասիրության վերաբերյալ տարբեր գրքեր ընթերցելով և նաև Իրանում ձեռներեցության հնարավորության չափման համար չափացույցի կազմմամբ, փորձեցինք կիրառել «ձեռներեցության հնարավորության զանազանման գործընթացի ծավալներ» կոչվող չափացույցը, որը Հիլզի և Լամպկինի կողմից կիրառվել է իրենց իսկ հետազոտություններում:

Չափացույցի ստույգության ձեռք բերման համար spss ծրագրի օգնությամբ օգտագործվել է երկու եղանակ՝ կիսման և Քրոնբախի ալֆա գործակցի հաշվարկը: Հաշվարկի եղանակներից մեկը Քրոնբախի ալֆայական բանաձևի կիրառման նկատմամբ եղած վստահությունն է: Այս եղանակը կիրառվում է չափման չափացույցի ներքին ներդաշնակության հաշվարկի, այդ թվում տարբեր հատկություններ չափող հարցաթերթիկների համար: Եթե ալֆա գործակցի եղանակը և կիսման եղանակը միմյանց հետ համեմատենք, կտեսնենք, որ փորձի երկու կեսերի բաժանումն իր տեսակով ալֆայական եղանակն է: Մեկ այլ կերպ ասած, ալֆա գործակիցը ստույգության գործակիցների միջին թվի ցուցիչն է ստացված մի փորձի հնարավոր մասերից: Այսինքն, եթե բոլոր իրար հետ կապված գործակիցները, որոնք ստացվել են հնարավոր երկու կեսերից, հաշվարկվի փորձի հետ, այդ գործակիցների միջին թիվը հավասար կլինի Քրոնբախի ալֆա գործակցի հետ: Հարցաթերթիկը լրացվել է փորձին մասնակից պատասխան տվողների կողմից: Հարցերը կազմված են եղել 5 տարբերակով (միանշանակ հակառակից մինչև միանշանակ համաձայն), որոնց տրվել են 1-ից մինչև 5 գնահատականներ:

Ձեռնարկատերերի նմուշ հանդիսացած տիպարները բաժանվում են երկու խմբի մի խմբի մեջ մտնում են գործադիր տնօրենները մյուսի մեջ տեխնիկական հարցերով տնօրեններ: Այս երկու խմբերին գնահատման ենթակա փորձի մեջ ընդգրկելով նրանց տարբերությունը տեսանելի եղավ երեք փոփոխականի տեսանկյունից ըմբռնողության, ստեղծարարության և շուկայի վերաբերալ իմացության, որն ըստ վիճակագրության 99% հավոգմամբ բովանդակալից է: Ինչպես նաև երկու խմբերի միջին թվի գնահատականների միջև եղած տարբերությունը ցույց տվեց, որ նշված

յուրաքանչյուր երեք դեպքերում գործադիր տնօրենները, տեխնիկական տնօրենների համեմատությամբ, ավելի մեծ միջին թիվ են իրենց հատկացրել:

Օգտագործված գրականության ցանկ

1mahmoud,ahmadpoordariyani(1387) definition entrepreneurship,theories,modeling .tehranpardes-
2-hill,g.e. lumpkin,g.t.and sigh,r.p.1997. opportunityrecognition,perception and behavior of entrepreneurs
3-ardichvili,a.et.al 2003."a theory of entrepreneurship opportunity identification and development",journal of business venturing
4-casson,m(2000) the entrepreneur, barnes and noble book ,Totowa,nj
5-shane,S.2000.prior knowledge and the discovery of entrepreneurial opportunities Organization Science,
6-singh,R.(1998), entrepreneurial opportunity Rcognition through social network,
7-Ozgen,E. Baron (2006)" Social sources of information in opportunity recognition: Effects of mentors, industry network, and professional forums"journal of business venturing
8-Reynolds,P.D(1999)national panel study of U.S. business stratup: Background and M ethodology Databases for the study of entrepreneurship,
9-kirzner, I.M.1985.discovery and the capitalist process Chicago,IL:University of Chicago press
10-Ray,S.andCardozo,R.(1996) sensitivity and creativity in entrepreneurship opportunity recognition:Aframework for empirical investigation.
11-boid,N,VIzik,R.2002.opportunityRcognition, Entrepreneurial Thought Leader L ectures:
USA:Stanford University

PROCESSE RECOGNIZE ENTREPRENEURIAL OPPORTUNITY

Summery

One of the characteristics of entrepreneurs is the ability to recognize entrepreneurial opportunities. We must have a valid scale that we able to measure this feature.

Due to the lack of a standard scale for measuring entrepreneurial opportunity recognition, The standardization was evaluated using a Hills & Sing scale (2004,1999) and based on obtained results of this research (a=0.74) this scale can be confidently recommended in scientific researches.